ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ
ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ
ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ Հասկանալով կարդալու կարողության ձևավորումը կարդալու տարբեր տեսակների կիրառման ճանապարհով

ԱՌԱՐԿԱ ԴԱՍՎԱՐ (ՄԱՅՐԵՆԻ, ՄԱԹԵՄԱՏԻԿԱ)

ՀԵՂԻՆԱԿ Հարությունյան Արևիկ Լենոյի

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ Հարթաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ

Աշխատանքը թույլատրված է պաշտպանության

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏ. ՂԵԿԱՎԱՐ՝ Ն. Ռ. Բաղդասարյան, ԳՊՀ դասախոս

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3
2. Կարդալու կարողության փուլերը տարրական դպրոցում…….……5
3. Կարդալու տեսակները, նրանց դերը կարդալու որակական հատկանիշների ձևավորման
գործում…….……..... 7
2. ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ……...…...……15
3. ՕԳՏԱԳՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ……...……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անառարկելի է կարդալու և ընթերցանության դերը անձի զարգացման, նրա մասնագիտական կարողությունների ձեռք բերման և հասարակության արժանավոր քաղաքացի դարձնալու գործընթացում: Կարդալը, ընթերցանությունը և նրա նկատմամբ անձի սերը և հակումները մեծ դեր ունեն նրա կյանքում: Կարդալու ընթացքում մարդը ձեռք է բերում ոչ միայն մադնագիտական և անձնային արժեքներ, այլև՝ հոգեկան բավականություն, թեթևություն, կարիքների բավարարում, արժեհամակարգ և այլն: Այս ամենը հնարավոր է իրականացնել, եթե նա ոչ միայն կարդա, այլև հասկանա իր կարդացածը: Պատահական չէ , որ տարրական դպրոցի մայրենիի չափորոշիչում և ծրագրում կարևված է սովորողների կարդալու կարողությանը զարգացումը, մասնավորապես հասկանալով կարդալու ունակությունը: Այս ունակության ձևավորման ուղղությամբ աշխատանքները հիմնականում իրականացվում են տարրական դպրոցում: Նշված գործընթացն ունի բազմաթիվ դժվարություններ, որոնք ոչ միշտ է հաջողվում հաղթահարել:

Այսպիսով, մեր ավարտական աշխատանքի **արդիականությունը** պայմանավորված է մարդու կյանքում հավասազոր կարդալու կարողության անհրաժեշտությամբ և տարրական դպրոցում այդ գործընթացում ծագած դժվարություններով ու դրանց հաղթահարման միտված մեթոդիկայի կիրառման անկատարությամբ:

Ուսումնասիրության **նպատակն է** բացահայտել կրտսեր դպրոցականների հասկանալով կարդալու կարղության ձևավորման դժվարությունները և ներկայացնել այդ գործընթացի կազմակերպման ուղղությամբ մեթոդաբանական ցուցումները:

Մեր նպատակին հասնելու համար մենք մեր առջև դրել ենք հետևյալ **խնդիրները**:

1. Ուսումնասիրել մասնագիտական գրականության մեջ մեր հիմնախնդիրների ուղղությամբ առկա սկզբունքները և դիտարկել արժեքավոր սկզբունքները:
2. Բացահայտել տարրական դասարանում մայրենիի ծրագրում հասկանալով կարդալու կարղության ձևավորման նվիրված աշխատանքների համալիրը:

3. Ուսումնասիրել և դիտարկել տարրական դպրոցում իրականացվող մայրենիի դասերը կրտսեր դպրոցականների հասկանալով կարդալու կարողության տեսանկյունից:

Ուսումնասիրության օբյեկտը տարրական դասարաններում մայրենիի դասավանդման գործընթացն է:

Ուսումնասիրության առարկան մայրենիի դասերի ընթացքում հասկանալով կարդալու կրտսեր դպրոցականների կարողության ձևավորման մեթոդական քայլաշարն է:

Հետազոտության ընթացքում կիրառել ենք **հետևյալ մեթոդները:**

- Մասնագիտական գրականության ուսումնասիրություն,
- Կրթության բովանդակությունն արտացոլող փաստաթղթերի ուսումնասիրություն,
- Դիտում, վերլուծություն:

ԿԱՐԴԱԼՈՒ ԿԱՐՈՂՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ

Հայտնի է, որ տարրական դասարաններում կարդալու կարողության ձևավորումը մայրենիի դասի հիմնական նպատակներից է: Դեռևս գրաճանաչության շրջանում ձևավորվում է երեխաների կարդալու նախնական կարողությունը: Նրանք կարողանում են կարդալ փոքրածավալ բնագրեր, պատասխանել բնագրի վերաբերյալ ուսուցչի տված հարցերին և դրանց օգնությամբ վերարտադրում են բնագրի բովանդակությունը: Այս ամենն աշակերտներին նախապատրաստում է բացատրական ընթերցանության մեթոդով կազմակերպվող մայրենիի դասին: Կարդալու կարողության մշակման արդյունավետությանը նախնական փուլում հատկապես նպաստում է բարձրաձայն ընթերցանությունը: Այն ընթերցանությանը տալիս է զարգացնող բնույթ: Հետագայում կարդալու հմտության ձեռքբերման բուրգի ընդհանուր աստիճանների մեջ պայմանականորեն առանձնանում է 5 քայլ: Առաջին երկուսը նպաստում են տեքստի հնչյունաբառային ըմբռնմանը, նրա վերարտադրմանը, ակտիվանում են խոսքի ըմբռնողական մեխանիզմները: Բառային ընթերցանության աստիճանում էականորեն զարգանում է կարդացած բառի և մտք ընկալումը, զուգորդվում է լսված բառի և նրա իմաստի՝ հասկացությունը: Նախադասություններով կարդալու աստիճանում (III աստիճան) կարդացածի ընկալման միավորը մեծանում է կարդալու վերացական-տրամաբանական կողմը հասնում է ավելի բարձր աստիճանի: Այս աստիճանում կարդացածը մտքի ընկալումը հասցնում է մտքային գուշակումների (ընթերցողը ենթադրում է՝ կռահում, թե ինչի մասին պիտի լինի շարունակությունը): Կարդացողի վարպետության քարձր մակարդակը՝ պայմանավորված է լայն ընթերցողական դաշտի ձևավորվածությամբ ընթերցողն սկսում է արագ տեսնել և կարդալ ամբողջական տողեր[1]:

Մայրենիի ուսուցման կարևոր նպատակներից մեկը Միքայել Նալբանդյանը համարել է ընթերցանությունը՝ որպես օրինակելի և կանոնավոր խոսքի ընդօրինակման, գիտելիքների հայթայթման, բառապաշարի հարստացման ու մտահորիզոնի ընդլայնման միջոց: «Կարդալը հարստացնում է մարդու միտքը,

[1] Աբրահամյան Ս. Գ., Աշակերտների խոսքի զարգացումը, -Եր., Լույս, 1973, էջ 25-27 :

կարդալու մեջ վարժվելը հաջողագյուտ է անում նրան, իսկ գրելը սովորեցնում է ճշգրտություն» — ասում է Նալբանդյանը[2]:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ մեկ տողն ընթերցելիս հմուտ ընթերցողի աչքերը կատարում են 3-6 կանգառ, որոնց ժամանակ տեղի են ունենում կարդացածի գիտակցում հասկացում և ըմբռնում: Անհասկանալի մտքի կամ բառի դեպքում, բնականաբար, ընթերցողի աչքերը կրկնում են շարժումը՝ վերադառնալով ընթերցածին:

Հոգեբաններն ու մեթոդիստներն առանձնացնում են կարդալու հմտության ձևավորման 3 փուլ **վերլուծական**, **համադրական** և **ավտոմատացված**:

Առաջին՝ **վերլուծական** փուլում տեսողական ընկալման միավորը տառն է կամ վանկը նայած, թե ընթերցողը վանկերով է կարդում, թե տառերով: **Համադրական** փուլում կարդալու ամենափոքր միավորը դառնում է բառը, ընթերցողը կարդում է ամբողջական բառերով, իսկ **ավտոմատացված** կարդալու ժամանակ կարդալու միավորը նախնադասությունն է ընթերցողը կարդում է նախադասություններով:

Կարդալը 6-7 տարեկան երխայի համար բարդ աշխատանք է, որն իրականանում է բազմաթիվ հոգեկան գործընթացների միջոցով (ուշադրություն, մտածողություն, հիշողություն, կամք, զգացմունք և այլն):

Մեր մանկավարժական պրակտիկայի ժամանակ հանգեցինք այն եզրակացությանը, որ առաջին դասարանցին, ուշադրությունը բևեռելով կարդալու գործընթացի մեխանիկական կողմին, ոչ միշտ է հասկանում իր կարդացածը, այդ պատճառով էլ նա մի քանի անգամ կրկնում է վանկերը կամ բառերը: Հաճախ աշակերտներն առանձին բառեր ոչ թե կարդում են, այլ ձգտում են գուշակել՝ կարդալով միայն դրանց առաջին վանկը՝ մենք նկատեցինք, որ երեխայի կարդալու հմտության ձևավորման հետ այս երևույթներն աստիճանաբար անհետանում են:

Ընթերցողական կարողության ձևավորման գերխնդիրն այնպիսի ընթերցողի ձևավորումն է, որը կարդալու ընթացքում ձեռք բերած տեղեկույթը մշակում է, իմաստավորում է և օգտագործում: Ճանաչողության տեսությունների համաձայն՝ մարդու

[2] Դարոնյան Ս., Շեքսպիրը Միքայել Նալբանդյանի և նրա ժամանակակիցների ընկալմամբ, «Շեքսպիրական», հատոր 5, Ե., 1975, էջ 189:

մտավոր կարողության մակարդակը որոշվում է նաև իր ձեռք բերած տեղեկույթը իմաստավորելու ունակությամբ:

ԿԱՐԴԱԼՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԴԵՐԸ ԿԱՐԴԱԼՈՒ ՈՐԱԿԱԿԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

«Մենք դիտարկեցինք կարդալու որակական հատկանիշները, որոնք պիտի ձևավորվեն ու զարգանան տարրական կրթության ողջ ընթացքում: Այս ուղղությամբ աշխատանքը պիտի շարունակվի նաև հիմնական դպրոցում: Բոլոր որակական հատկանիշների պահպանմամբ կարդալու հմտությունը պիտի ամբողջանա հիմնական դպրոցում, որտեղ մայրենիի դասի խմդիրներից է նաև գրական ընթերցանությունը:

Տարրական դպրոցում կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության զարգացումն ու ձևավորումն իրականացվում են նյութի բազմակի ընթերցանության ճանապարհով կիրառելով բազմաբնույթ նպատակներ և կազմակերպման ինքնատիպ ձևեր ունեցող կարդալու տեսակներ: Դրանք ոչ միայն նպաստում են կարդալու որակական հատկանիշների ձևավորմանն այլև մշակում են ընթերցողական կարողություններ, միևնույն ստեղծագործության բազմնակի ընթերցման գործընթացը դարձնում են հետաքրքրական և անձանձիր: Հետևաբար մայրենիի դասերի ժամանակ պիտի կիրառել կարդալու բոլոր տեսակներրն էլ անշուշտ հաշվի առնելով ստեղծագործության առանձնահատկությունները:

Մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի դասարանական ընթերցումը կարելի է իրականացնել մի քանի ձևով՝ <u>ձայնով</u> կամ <u>բարձրաձայն, լուռ</u> կամ <u>մտքում,</u> շարունակելով, մեկնաբանելով կամ կանգառներով ընտրովի, և դերերով: Սրանցից յուրաքանչյուրն ունի իրականացման որոշակի մեթոդիկա:

Ձայնով կարդալը, քանի որ այսպիսի ընթերցումը նպաստում է կարդալու կարողության մշակմանն ու կատարելագործմանը, ինչպես նաև ձևավորում է կարդացածը հասկանալու կարողություն: Ձայնով կարդալու միջոցով ուսուցիչն

աշակերտներին տալիս է արտահայտիչ կարդալու նմուշ, բացահայտում է երեխայի կարդալու գործընթացի թերությունները:

Մտքում կարդալը կրտսեր դպրոցականների համար դժվար է, քանի որ նրանց ուշադրությունը դեռևս կամային չէ, ցրված է, և երեխաներն արագ կարող են շեղվել: Արդյունքում երեխան կարող է մատը տողերի վրայով սահեցնել, սակայն մտքով ուրիշ տեղ լինել:

Ձայնով կարդալը լինում է երկու տեսակ՝ **բարձրաձայն** և **ցածրաձայն**, որոնք հիմնականում օգտագործվում են գործող անձանց հոգեվիճակներն արտահայտելու համար: Օրինակ՝ նկարագրությունները, դանդաղ զարգացող գործողությունները, տխուր մեկնաբանությունները, խորհրդավոր մտքերը պետք է կարդալ ցածրաձայն դանդաղ, իսկ արագ զարգացող գործողությունները բարձրաձայն և արագ: Բարձրաձայն են արտահայտվում ուրախությունը, զայրույթը, սպառնալիքը, մինչդեռ սերը, փաղաքշանքը, տխրությունը, խորհուրդն արտահայտվում են ցածրաձայն:

Բարձրաձայն ընթերցանությունը կոլեկտիվ աշխատանք կատարելու (կարդալ շարունակելով, կանգառներով, ընտրովի, դերերով և այլն) անփոխարինելի միջոց է և ոչ միայն միավորում է տվյալ դասարանի բոլոր աշակերտների ուշադրությունը, այլև ուղղորդումI է ողջ դասարանին՝ կարդալ մտքում (աչքերով)՝ հայացքով հետևելով ընկերների ընթերցանությանը և իմաստավորելով կարդացածը: Եզակի դեպքերում կարելի է նաև դիմել բարձրաձայն խմբովին կարդալուն (հատկապես առաջին դասարանում, երբ որևէ բառ երեխաները դժվարությամբ են արտասանում կամ կարդում)[3]: Մասնավորապես չափածո խոսքը կարելի է անգիր սովորեցնել խմբովին կարդալու միջոցով՝ բանաստեղծության ռիթմը ուսուցանելու համար: Բարձրաձայն ընթերցանությանը տարրական դպրոցում մեծ տեղ է տրվում նաև այն բանի համար, որ այդ ձևով կարդալիս ընքերցանության գործընթացին մասնակցում են երեխաների ոչ միայն աչքերն ու արտասանական կառույցը, այլև ականջները. որքան շատ զգայարան մասնակցի ուսուցման գործընթացին, այնքան այդ գործընթացն արդյունավետ կլինի «Ձայնով կարդալը ոչ միայն մշակում ու զարգացնում է երեխաների կարդալու

[3] Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 1975, N5, - с 64.

հմտությունները, այլև սովորեցնում է խոսելու օրգանները, ձայնը և շնչառությունը ճիշտ կառավարելու արվեստը, որը կատարելության է հասնում աստմունքողների մոտ»[4]:

Տարրական դասարաններում բարձրաձայն կարդալուն զուգընթաց նաև լուրջ աշխատանք է պահանջվում մտքում կարդալու կարողության մշակման ուղղությամբ:

Լուռ կարդալը մտքում կարդալն է, որն իրականացվում է դասարանում՝ ասուցչի հսկողության ներքո (աչքերի շարժումով՝ առանց խոսքի օրգանների մասնակցության) մտքում կարդալուն աշակերտը սկսում է հասկանալ նյութը և յուրացնել է այն ներքին խոսքով: Բայց յուրացնելով նյութը՝ կրտսեր դպրոցականը համախ դժվարանում է բառերով արտահայտել այս կամ հասկացածը՝ հաղորդել ուրիշ մարդկանց: Նման դեպքերում օգտակար է երեխաներին խորհուրդ տալ բարձրաձայն պատմել այն, ինչ կարդացել ու հասկացել են:

Մտքում կարդալու նախնական կարողությունն սկսվում է ձևավորվել դեռևս այն ժամանակ, երբ համադասարանային ընթերցման ժամանակ (շարունակելով) մեկը կարդում է, իսկ մնացածն աչքերով հետևում են: «Սրա նպատակն այն է, որ մինչև ուսուցիչը կբացատրի նյութը, աշակերտը ընթերցումով հասցնում է ծանոթանալ տեքստի բովանդակությանը և նրա հետ ակտիվորեն մասնակցում նյութի մեկնաբանմանը: Լուռ ընթերցման առավելությունը նաև այն է, որ առանց արտասանական ապարատների մասնակցության, աչքերով կարելի է կարդալ նյութի բովանդակությունն ըմբռնելով յուրովի ըստ անհատի խառնվածքի, նրա անհատական ու տարիքային առանձնահատկությունների:

Աստիճանաբար անհրաժեշտ է երեխաներին հանձնարարել նախ շշուկով կարդալ ապա մտքում: Այս կարողությունը հետագայում պետք է գալու աշակերտներին երբ շատանան դասավանդվող առարկաները, ընդարձակվի յուրաքանչյուր առարկայի բովանդակությունը, բարձրաձայն կարդալով՝ ոչ միան սովորողները չեն հասցնի ծավալուն նյութն ընթերցել (բարձրաձայն ընթերցանությունը ավելի շատ ժամանակ է պահանջում), այլև այն հոգնեցուցիչ է, երեխաները կհոգնեն իրենց ձայնից: Միաժամանակ չպիտք է մոռանալ, որ «Լուռ ընթերգանութունը մեծ կշիռ է ունենում այն դեպքում, երբ աշակերտը բարձրաձայն ընթերցանության կարողություն ունի»:

---

[4] Գյուլամիրյան Ջ. Խմբային աշխատանքը՝ որպես ուսուցման ստեղծագործականհետազոտական ուղղվածության ապահովման միջոց. Իրականացման մեթոդիկա: Նախաշավիղ, 2001 թիվ 3, էջ 27-32:

Տարրական դպրոցում միշտ չէ, որ խրախուսվում է մտքում կարդալը։

Շարունակելով կարդալ։ Կարդալու այս տեսակը շատ արդյունավետ է տարրական դասարաններում, երբ ուսուցչի հանձնարարությամբ աշակերտներից մեկը կարդում է, ամբողջ դասարանը աչքերով (մտքում կարդալով) հետևում է ընկերոջ ընթերցանությանը՝ պատրաստ շարունակելու այն հատվածից, ուր կընդհատի ընթերցողը ուսուցչի պահանջով։ Ինչպես նշեցինք, կարդալու այս տեսակի միջոցով միանգամից կարդում է ամբողջ դասարանը։

Պետք է նկատի ունենալ, որ շարունակելով կարդալու ժամանակ չի կարելի ընդհատել երեխայի ընթերցանությունը և մեկ ուրիշին պատահական հատվածից շարունակել տալ։ Անհրաժեշտ է թույլ տալ, որ կարդացողը հասնի մտքի տրամաբանական ավարտին, դեպքի նկարագրությանը և այլն, նոր հանձնարարել մեկ այլ աշակերտի՝ շարյանակել կարդալը։

Շարունակելով կարդալուն պիտի հաջորդի <u>կանգառներով (հատվածաբար)</u> ընթերցանությունը, որի ժամանակ ընթերցած նյութը հատված առ հատված մեկնաբանվում է։ Այդ պատճառով էլ կարդալու բարդ տեսակը կոչվում է նաև մեկնաբանել ով ընթերցանություն։ **Բացատրելով կամ մեկնաբանելով** կարդալն իրագործվում է կարդացած նյութի բովանդակությունը կամ մտքերը բացատրելով ու մեկնաբանելով, քննարկելով գործող անձանց վարքը, արդարացնելով կամ մեղադրելով նրանց, բառային աշխատանք կատարելով, բառերի ուղղագրությունը բացատրելով, կետադրությունը մեկնաբանելով և այլն։ Այս աշխատանքները նպաստում են նյութի բովանդակության հասկացման կարդալու կարողության կատարելագործմանը, վերլուծական և քննադատական մտածողության զարգացմանը։ Սեկնաբանելով ընթերցանության մեթոդապես ճիշտ կազմակերպման համար կարևոր է ուսուցչի կողմից ընթերցվելիք ստեղծագործության տրամաբանական հատվածների (կանգառների) և հենակետային մտքերի որոշումն ու նրանց շուրջ իրականացվող աշխատանքի բովանդակության նախագծումը, ինչպիս՞ի հատվածների պիտի բաժանել ստեղծագործությունը, ո՞ր հենակետային մտքերը պիտի դիտարկել, ի՞նչ հարցեր պետք է առաջադրվեն աշակերտներին, ո՞ր բառերը ու արտահայտություններն են օգնում

բացահայտելու հիմնական միտքը, ենթատեքս (բանալի բառեր), ո՞ր մտքերն են լուծելու դաստիարակչական խնդիրներ և այլն:

Սեկնաբանող կամ կանգառներով ընթերցանությունը մեծապես նպաստում է բնագրի բովանդակության մեջ թափանցելուն, գործող անձանց և կերպարների էությունն ըմբռնելուն, ներկայացվող դեպքերի տրամաբանական և պատճառահետևանքային կապերը հասկանալուն, գաղափարն ու ենթատեքստը բացահայտելուն և մեկնաբանելուն: Սրանք ընթերցողական կարողության հիմնական բնութագրիչներ են: Կարդալու բոլոր տեսակներն է նպաստում են ընթերցողական կարողության զարգացմանը, սակայն կանգառներով ընթերցանությունն այդ խնդրում առավել ընդարձակ հնարավորություններ ունի:

Տարրական դարոցում հանձնարարվող կարդալու մեկ ուրիշ տեսակ է **ընտրովի ընթերցանությունը**, որի ժամանակ աշակերտն ուսուցչի հանձնարարությամբ առանձնացնում է այս կամ այն գործող անձի խոսքերը, որևէ հատվածը կամ միտքը, դուր եկած տողերը և այլն՝ դրանով իսկ ընդգծելով այդ անձանց բնավորության գծերը, հեղինակի կամ ընթերցողի համար կարևոր գաղափարները: Սա նպաստում է աշակերտների կարդալու որակական հատկանիշների պահպանմամբ ընթերցելու կարողության կատարելագործմանը և լուռ կարդալու ունակության ձևավորմանը, քանի որ ուսուցչի հանձնարությունը կատարելու համար աշակերտը նախ լուռ պիտի կարդա բնագիրը, ապա որոշի պահանջվող նախադասությունը կամ պարբերությունը:

Ընտրովի ընթերցանությունն իրականացվում է նախապես մշակված հարցերի միջոցով որոնք աշակերտից պահանջում են ոչ թե մեխանիկորեն կարդալ անհրաժեշտ հատվածը, այլ նրան մտածել են տալիս կարդացածի շուրջ, օգնում են մեկ անգամ ևս վերլուծել և նկարագրված դեպքերը, հերոսների արարքները, քննարկել, տրամաբանել ու այդ հիմքի վրա նոր ընտրել ու կարդալ բնագրի որոշակի հատվածը:

Ընտրովի ընթերցանությունը մասնավորապես նպաստում է սովորողների վերլուծական համադրական, այսինքն՝ քննադատական մտածողության զարգացմանը;

Օրինակ Ա. Խնկոյանի «Ճպուռն ու մրջյունը» ստեղծագործությունն ընտրովի ընթերցանելու ժամանակ կարելի է տալ այսպիսի առաջադրանքներ

- Ընտրեք և կարդացեք ամենից շատ ձեզ դուր եկած հատվածը:

- Որոշենք հեղինակի խոսքերը՝ եկեք հաջորդաբար դրանք ընթերցենք :
- Ընտրեք և կարդացեք այն տողերը, որտեղ նկարագրվում են ճպուռի ամառային օրերը:
- Ինչպիսի՞ն էր ճպուռը (ծույլ): Ինչի՞ց իմացաք: Ո՞ր տողերն ընթերցելիս դուք այդ տպավորությունը ստացար: Կարդացեք այդ տողերը
- Կարդացեք այն տողերը, որտեղ մրջյունը դատապարտում է ճպուռին:
- Որոշեք և կարդացեք այն հատվածը, ուր նկարագրվում է ձմեռային բնությունը:
- Ընթերցեք այն տողերը, ուր նկարագրվում է ճպուռի բարձր տրամադրությունը:
- Ինչպիսի՞ն էր մրջյունը: Հիմնավորեք պատասխանը՝ ընթերցելով համապատասխան տողերը և այլն:

Ընտրովի ընթերցանությունը պիտի նախորդի **դերերով ընթերցանությանը**, որովհետև ընտրովի ընթերցանության ժամանակ երեխաները ծանոթանում են ստեղծագործության հերոսների հետ, հասկանում են նրանց արարքների դրդապատճառները, իմաստավորում և յուրացնում են նրանց խոսքերը, որոշում և մտապահում յուրաքանչյուր հերոսի խոսքի տեղը բնագրում, և դերերով ընթերցելիս նրանք չեն շփոթվում, դերը «կատարում են» հասկանալով:

Դերերով կարդալիս աշակերտները հատկապես սխալվում են հեղինակի խոսքերի ընթերցման ժամանակ: Մեկ պատճառով Գյուլամիրյանը խորհուրդ է տվել դերերով կարդալուց առաջ ուսուցչի առաջարկով որոշել, թե քանի գործող անձ և հերոսներ են խոսում բնագրում — Իսկ ո՞վ է պատմողը,— հուշում է ուսուցիչը՝ ակնկալելով, որ աշակերտները կնշեն հեղինակ բառը[5]:

— Ուրեմն, մենք քանի՞ հոգի պիտի ընտրենք դերերով ընթերցելու համար:

Աշակերտները հաշվում են գործող անձանց՝ չմոռանալով հեղինակին: Տարրական դասարաններում արտահայտիչ կարդալու կարողության մշակման գործում հատկապես մեծ է դերերով կարդալու նշանակությունը: Ամենավատ կարդացողն անգամ դերերով կարդալիս լավ է ընթերցում, որովհետև նա ձգտում է ճիշտ

[5] Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք, -Եր.:՝Զանգակ-97՚, 2009,- էջ 79:

արտահայտելու գործող անձի հոգեվիճակը: Դերերով պետք է կարդալ տալ գործող անձերով հարուստ բնագրեր, որպեսզի որքան հնարավոր է շատ աշակերտներ մասնակցեն ընթերցանությանը: Հատկապես հանձնարարելի են էպիկական բանաստեղծությունները, առակները, հեքիաթներն ու պատմվածքները: Դերերով կարդալը բնագրի ուսումնասիրման լավագույն միջոցներից է, այն նպաստում է բնագիրը լավ հասկանալուն և արտահայտիչ կարդալուն:

Դերերով կարդալուն երեխաներին պիտի նախապատրաստել: Նախ կարևոր է սահուն և հասկանալով կարդալը, ապա գլխավոր մտքի որոշումը, ենթատեքստի կռահումը և հերոսների բնավորությունների, տրամադրությունների և դրանց պատճառների բացահայտումը: Այս ամենին նպաստում է հատկապես ընտրովի ընթերցանությունը: Հենց այդ պատճառով էլ դերերով կարդալուն անպայման պիտի նախորդի կարդալու այդ տեսակը:

Դերերով կարդալիս պետք է պահպանել մի քանի պայման.

- Դերերի բաշխումը կատարել աշակերտների ցանկությամբ,
- Որևէ դեր չպարտադրել, եթե աշակերտը չի ցանկանում այն կատարել,
- Երբեք երեխաներին չնմանացնել հերոսներին:

Կարդալու կարողության ձևավորման խնդրում կարևոր է այն, թե ով է առաջինը կարդում դասի համար նախատեսված ստեղծագործությունը՝ ուսուցիչը թե աշակերտը, և ինչպե՞ս պետք է այն կարդալ՝ մաս-մա՞ս, թ՞ե ամբողջությամբ: Գործնական բնույթի նյութերի (պատմական, բնագիտական, աշխարհագրական) ուսումնասիրումը պետք է տարվի մասից դեպի ընդհանուրը գնացող հաջորդականությամբ, քանի որ դրանցում պարունակվող աշխարհաճանաչողական գիտելիքների մասով ուսումնասիրումն ավելի դյուրընկալ է, այդ դեպքում նյութը հանվածաբար բաժանվում է, մեկնաբանվում ինչպես ուսուցչի, այնպես էլ աշակերտների կողմից, այսինքն կատարվում է կանգառներով ընթերցում: Գեղարվեստական (պատմվածք, բանաստեղծություն, առակ, հեքիաթ) և ժողովրդական (առած, ասացվածք, հանելուկ, շուտասելուկ և այլն)մանրապատում ստեղծագործությունների ուսումնասիրումն իրականացվում է ընդհանուրից մասը գնացող հաջորդականությամբ, քանզի բնագրի ամբողջությամբ կարդալուց հետո է միայն հնարավոր հասկանալ նրա հիմնական միտքը՝ գաղափարը,

կռահել ենթատեքստը, և միայն այդ դեպքում ստեղծագործությունը կարող է երեխաների վրա դաստիրակչական ներգործություն ունենալ , առաջացնել է համանման հույզեր ու զգացմունքներ: Այս դեպքում նաև ամբողջությամբ պետք է կարդալ բնագիրը (օրինակ շարունակելով) և միայն դրանից հետո մասերով վերլուծել: Սա նշանակում է, որ բնագրի առաջին ընթերցումը պետք է լինի կատարյալ, արտահայտիչ ու հուզական, որպեսզի ստեղծագործության միտքը ամբողջությամբ հասնի աշակերտին: Անշուշտ շահեկան է հենց սկզբից աշակերտներն ինքնուրույն կարդան ստեղծագործությունը, որպեսզի հետաքրքիր լինի կարդալը և նրանք ձգտեն մինչև վերջ այն ընթերցել:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մեր ուսումնասիրած մասնագիտական գրականության մեջ մանրամասն քննարկվում է կարդալու կարողության հիմնախնդիրները, սակայն կարդալու առանձին որակներին, մասնավորապես հասկանալով կարդալու կարողությանը անհրաժեշտ չափով անդրադարձ չկա։

2. Կրտսեր դպրոցականի ընթերցողական կարողությունների զարգացումը նպաստում է ուսուցման արդյունավետության բարձրացմանը: Ճիշտ, սահուն, հասկանալով, արտահայտիչ կարդացող աշակերտներն ավելի լավ են սովորում ցանկացած առարկա, քան կցկտուր կարդացողները: Բանն այն է, որ վատ կարդացողն ընթերցելիս իր ուշադրությունը հիմնականում կենտրոնացնում է կարդալու գործողությանը և չի ըմբռնում կարդացածի բովանդակությունը, հիմնական միտքը և այլն:

3. Ընթերցանության նկատմամբ հետաքրքրասիրություն աշակերտների մեջ պետք է առաջացնել դեռևս առաջին դասարանից: Այդ իսկ պատճառով այբբենարանն ավարտելուց հետո անգամ պետք է փոքրերի համար կարդալ հետաքրքիր հեքիաթներ և իրենց նույնպես դրդել դրանք կարդալ, հետաքրքրություն առաջացնել կարդալու նկատմամբ:

4. Կարդալ սովորեցնելու համար պետք է առաջարկել ոչ միայն դասագրքի նյութերը, այլև անծանոթ տեքստեր: Կարդալու կարողության ձևավորմանը և ճիշտ կարդալուն պետք է հետևեն տվյալ դասարանում դասավանդող բոլոր ուսուցիչները:

5. Մանկավարժական պրակտիկայում կիրառվում են կարդալու կարողությունը զարգացնող հնարներ: Արդյունավետ է «Փոխգործուն գրառումների համակարգ», «Քառաբաժան», «Կրկնակի գրառումներով օրագիր», «Մտածի՛ր-զուգորդի՛ր-մտքե՛ր փոխանակիր» և այլ հնարներ:

ՕԳՏԱՏՈՐԾԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբրահամյան Ս. Գ., Աշակերտների խոսքի զարգացումը, -Եր., «Լույս», 1973, էջ 25-27:
2. Գյուլամիրյան Ջ. Հ., Խաղալով սովորենք, -Եր.: «Զանգակ-97», 2009,- էջ 79:
3. Գյուլամիրյան Ջ., «Խմբային աշխատանքը՝ որպես ուսուցման ստեղծագործականհետազոտական ուղղվածության ապահովման միջոց. Իրականացման մեթոդիկա»: Նախաշավիղ, 2001 թիվ 3, էջ 27-32:
4. Դարոնյան Ս., Շեքսպիրը Միքայել Նալբանդյանի և նրա ժամանակակիցների ընկալմամբ, «Շեքսպիրական», հատոր 5, Ե., 1975, էջ 189:
5. Лийметс Х. И., Групповая работа на уроке. -М., Знание, 1975, N5, - с 64.